«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/3

ք. Երևան «24» սեպտեմբեր 2020թ.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամն, ի դեմս ռեկտորի պարտականությունները կատարող, պրոռեկտոր՝ Ռ.Աղգաշյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ.Գոքորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Թիվ 7 մասնաշենքի առաջին հարկի միջանցքի և 102, 201, 201/1, 202, 303, 305լսարանների վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 90 օրացույցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. **Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. **Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. **Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 **Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված** 365**օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները**:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N2.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __10___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 16.794.063(Տասնվեց միլիոն յոթ հարյուր իննսունչորս հազար վաթսուներեք) ՀՀ դրամ, որից 2.799.010,44 (Երկու միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար տաս) ՀՀ դրամը՝ քառասունչորս լուման ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք

հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է __18__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ	«Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105	Հասցեն՝ ք. Գավառ, Ազատության 49/27
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ	Բանկը՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100	Հ/Հ 1660000529190100
ՀՎՀՀ 01504054	ՀՎՀՀ 08416387
Ռեկտորի պ/կ պրոռեկտոր	Տնօրեն
Ռ.Աղգաշյան	Գ.Գոքոյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » սեպտեմբեր 2020թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Թիվ 7 մասնաշենքի առաջին հարկի միջանցքի և 102, 201, 201/1, 202, 303, 305 լսարանների վերանորոգման աշխատանքների

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի ընդհանուր արժեքը հազար ՀՀ դրամ	Ընդհանուր արժեքը հազար ՀՀ դրամ
1	2	3	4	5	6	
		Մասնաշենք 7, Առաջին հարկի միջանցքի և 102, 201, 201/1, 202, 303, 305 լսարանների վերանորոգում				
		102 լսարանի շինարարական աշխատանքներ				
		Քանդման աշխատանքներ				
1	E46-124	Փայտե դռների ապամոնտաժում	մ²	2.6	2.48	6.448
2	E46-122	Փայտե պատուհանների ապամոնտաժում, պատուհանագոգերի հետ միասին	մ²	6.6	3.72	24.552
3	P11-80	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ²	119.1	0.124	14.7684
4	E46-121	Լամինատե հատակի քանդում	մ²	33.8	0.372	12.5736
5	8-603-1 K=0.4	Լուսատուների ապամոնտաժում	հատ	5	0.124	0.62
6	P17-140	Թուջե մարտկոցների ապամոնտաժում	հատ	27	0.4464	12.0528
7	C310-15 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 15կմ	տ	5.2	1.612	8.3824
						0.473%
		Կառուցողական աշխատանքներ				
1	շուկա	Մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/, պրոֆիլ արտերկիր կամ համարժեք	մ²	2.5	30.256	75.64
2	E6-161	Ե/բ գոտու իրականացում	մ³	0.01	40.92	0.4092
3	շուկա	Ամրան Ի12A500C	տ	0.01	434	4.34
4	շուկա	Ամրան Ի6AcI	տ	0.01	434	4.34
5	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով կամ համարժեք, 60մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, բացվող	մ2	3.3	27.776	91.6608
6	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով կամ համարժեք, 60մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, չբացվող	մ²	3.3	16.616	54.8328
7	շուկա	Բարդ փական	հատ	1	8.68	8.68
8	E10-103	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 55սմ լայնությամբ	մ²	2.6	0.62	1.612
9	շուկա	Պլաստմասե պատուհանագոգի արժեքը,b=55սմ	գմ	4.7	5.1212	24.06964
10	P14-380	Պատերի քսահարթում գիպսոնիտով	մ²	23.9	0.4216	10.07624
11	E15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ²	119.1	1.6244	193.46604
12	E34-389 K=0.5	Կախովի առաստաղի պատրաստում գիպսաստվարաթղթե սալերից, մետաղական հիմնակմախքով 9.5մմ հաստ.	մ²	52.5	3.1	162.75

13	E15-665	Առաստաղի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ²	52.5	1.6244	85.281
14	P5-119	Նախահատակ նրբատախտակով, δ=9մմ	մ²	52.5	4.0424	212.226
15	E11-191 կիր.	Լամինատե հատակի պատրաստում 12մմ /արտերկրյա կամ համարժեք, ներառյալ սպունգը եւ շրիշակները/	մ²	52.5	9.92	520.8
16	E18-111	Ջեռուցման թուջե մարտկոցների վերատեղադրում	հատ	27	0.62	16.74
17	E15-614	Ջեռուցման թուջե մարտկոցների ներկում 2 շերտ	մ²	3.3	1.736	5.7288
18	8-603-1	Լուսատու առաստաղային 30վտ LED, 1250x250	հատ	10	6.2	62
19	E46-57	Ակոսների փորում պատերում	գմ	75.0	0.124	9.3
20	շուկա	Տուփեր ճյուղավորման	հատ	2	0.868	1.736
21	շուկա	Տուփեր վարդակների և անջատիչների տեղադրման համար	հատ	8	0.062	0.496
22	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՈՊՎ 3x2.5մմ2	գմ	70.0	0.3472	24.304
23	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՈՊՎ 3x1.5մմ2	գմ	50.0	0.248	12.4
24	8-591-7	Երկբևեռ հողանցիչով վարդակի տեղադրում	հատ	16	2.232	35.712
25	8-591-10	Երկստեղնավոր անջատիչի տեղադրում	հատ	2	1.984	3.968
						9.661%
		201 լսարանի շինարարական աշխատանքներ				
		Քանդման աշխատանքներ				
1	E46-124	Փայտե դռների ապամոնտաժում	մ²	2.5	2.48	6.2
2	E46-122	Փայտե պատուհանների ապամոնտաժում, պատուհանագոգերի հետ միասին	մ²	12.0	3.72	44.64
3	P11-80	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ²	99.8	0.124	12.3752
4	E46-121	Լինոլեումից հատակի քանդում	մ²	50.2	0.248	12.4496
5	8-603-1 K=0.4	Լուսատուների ապամոնտաժում	հատ	6	0.124	0.744
6	P17-140	Թուջե մարտկոցների ապամոնտաժում	հատ	20	0.4464	8.928
7	C310-15 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 15կմ	տ	4.7	1.612	7.5764
						0.553%
		Կառուցողական աշխատանքներ				
1	շուկա	Մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/, պրոֆիլ արտերկիր կամ համարժեք	մ²	2.5	30.256	75.64
2	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով կամ համարժեք, 60մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, բացվող	մ²	2.7	27.776	74.9952
3	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով կամ համարժեք, 60մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, չբացվող	մ²	9.3	16.616	154.5288
4	շուկա	Բարդ փական	հատ	1	8.68	8.68
5	E10-103	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 55սմ լայնությամբ	մ²	3.3	0.62	2.046
6	շուկա	Պլաստմասե պատուհանագոգի արժեքը,b=55սմ	գմ	5.9	5.1212	30.21508
7	P14-380	Պատերի քսահարթում գիպսոնիտով	մ²	20.0	0.4216	8.432
8	E15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ²	99.8	1.6244	162.11512
9	E34-389 K=0.5	Կախովի առաստաղի պատրաստում գիպսաստվարաթղթե սալերից, մետաղական հիմնակմախքով 9.5մմ հաստ.	մ²	50.2	3.1	155.62
10	E15-665	Առաստաղի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ²	50.2	1.6244	81.54488
11	P5-119	Նախահատակ նրբատախտակով, δ=9մմ	մ²	50.2	4.0424	202.92848

12	E11-191 կիր.	Լամինատե հատակի պատրաստում 12մմ /արտերկրյա կամ համարժեք, ներառյալ սպունգը եւ շրիշակները/	մ²	50.2	9.92	497.984
13	E18-111	Ջեռուցման թուջե մարտկոցների վերատեղադրում	հատ	20	0.62	12.4
14	E15-614	Ջեռուցման թուջե մարտկոցների ներկում 2 շերտ	մ²	2.4	1.736	4.1664
15	8-603-1	Լուսատու առաստաղային 30վտ LED, 1250x250	հատ	6	6.2	37.2
16	E46-57	Ակոսների փորում պատերում	գմ	30.0	0.124	3.72
17	շուկա	Տուփեր ճյուղավորման	հատ	2	0.868	1.736
18	շուկա	Տուփեր վարդակների և անջատիչների տեղադրման համար	հատ	5	0.062	0.31
19	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՊՊԲ 3x2.5մմ2	գմ	35.0	0.3472	12.152
20	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՊՊԲ 3x1.5մմ2	գմ	30.0	0.248	7.44
21	8-591-7	Երկբևեռ հողանցիչով վարդակի տեղադրում	հատ	4	2.232	8.928
22	8-591-10	Երկստեղնավոր անջատիչի տեղադրում	հատ	1	1.984	1.984
						9.198%
		201/1 լսարանի շինարարական աշխատանքներ				
		Քանդման աշխատանքներ				
1	E46-40	Բացվածքների իրականացում պատերում 0.15մ հաստությամբ, S=1.9մԱ	մ³	0.3	3.72	1.116
2	E46-124	Փայտե դռների ապամոնտաժում	մ²	2.0	2.48	4.96
3	E46-122	Փայտե պատուհանների ապամոնտաժում, պատուհանագոգերի հետ միասին	մ²	4.0	3.72	14.88
4	P15-66	Թղթե պաստառի քերում պատերից	մ²	40.3	0.124	4.9972
5	E46-121	Լինոլեումից հատակի քանդում	մ²	18.3	0.248	4.5384
6	P17-140	Թուջե մարտկոցների ապամոնտաժում	հատ	10	0.4464	4.464
7	C310-15 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 15կմ	տ	4.8	1.612	7.7376
						0.254%
		Կառուցողական աշխատանքներ				
1	շուկա	Մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/, պրոֆիլ արտերկիր կամ համարժեք	մ²	2.5	30.256	75.64
2	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով կամ համարժեք, 60մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, բացվող	մ²	2.7	27.776	74.9952
3	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով կամ համարժեք, 60մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, չբացվող	մ²	9.3	16.616	154.5288
4	շուկա	Բարդ փական	հատ	1	8.68	8.68
5	E10-103	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 55սմ լայնությամբ	մ²	1.1	0.62	0.682
6	շուկա	Պլաստմասե պատուհանագոգի արժեքը,b=55սմ	գմ	2.0	5.1212	10.2424
7	E10-298 K=0.5	Պատերի երեսպատում գիպսաստվարաթղթե սալերով 12.5մմ հաստ. մետաղական հիմնակմախքով	մ²	17.8	3.5092	62.46376
8	P14-380	Պատերի քսահարթում գիպսոնիտով	մ²	7.7	0.4216	3.24632
9	E15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ²	56.2	1.6244	91.29128
10	P5-119	Նախահատակ նրբատախտակով, δ=9մմ	մ²	18.3	4.0424	73.97592
11	E11-191 կիր.	Լամինատե հատակի պատրաստում 12մմ /արտերկրյա կամ համարժեք, ներառյալ սպունգը եւ շրիշակները/	մ²	18.3	9.92	181.536
12	E18-111	Ջեռուցման թուջե մարտկոցների վերատեղադրում	հատ	10	0.62	6.2
13	E15-614	Ջեռուցման թուջե մարտկոցների ներկում 2 շերտ	մ²	1.2	1.736	2.0832
14	շուկա	Տուփեր վարդակների և անջատիչների տեղադրման համար	հատ	5	0.062	0.31
15	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՊՊԲ 3x2.5մմ2	գմ	30.0	0.3472	10.416
16	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՊՊԲ 3x1.5մմ2	գմ	20.0	0.248	4.96

17	8-591-7	Երկբևեռ հողանցիչով վարդակի տեղադրում	հատ	4	2.232	8.928
18	8-591-10	Երկստեղնավոր անջատիչի տեղադրում	հատ	1	1.984	1.984
		202 յարանի շինարարական աշխատանքներ				4.598%
		Քանդման աշխատանքներ				
1	E46-124	Փայտե դռների ապամոնտաժում	մ²	2.5	2.48	6.2
2	E46-122	Փայտե պատուհանների ապամոնտաժում, պատուհանագոգերի հետ միասին	մ²	8.0	3.72	29.76
3	E46-87	Փայտե վահանակների ապամոնտաժում պատերից	մ²	22.9	0.372	8.5188
4	P11-80	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ²	36.8	0.124	4.5632
5	P11-80	Յուղաներկի մաքրում պատերից	մ²	20.2	0.1364	2.75528
6	8-603-1 K=0.4	Լուսատուների ապամոնտաժում	հատ	4	0.124	0.496
7	P17-140	Թուջե մարտկոցների ապամոնտաժում	հատ	10	0.4464	4.464
8	C310-15 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 15կմ	տ	7.2	1.612	11.6064
		Կառուցողական աշխատանքներ				0.407%
1	շուկա	Մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/, պրոֆիլ արտերկիր կամ համարժեք	մ²	2.5	30.256	75.64
2	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով կամ համարժեք, 60մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, բացվող	մ²	1.8	27.776	49.9968
3	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով կամ համարժեք, 60մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, չբացվող	մ²	6.2	16.616	103.0192
4	շուկա	Բարդ փական	հատ	1	8.68	8.68
5	E10-103	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 55սմ լայնությամբ	մ2	2.2	0.62	1.364
6	շուկա	Պլաստմասե պատուհանագոգի արժեքը,b=55սմ	գմ	3.9	5.1212	19.97268
7	E10-298 K=0.5	Պատերի երեսպատում գիպսաստվարաթղթե սալերով 12.5մմ հաստ. մետաղական հիմնակմախքով	մ²	42.4	3.5092	148.79008
8	P14-380	Պատերի քսահարթում գիպսոնիտով	մ²	7.5	0.4216	3.162
9	E15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ²	79.9	1.6244	129.78956
10	E34-389 K=0.5	Կախովի առաստաղի պատրաստում գիպսաստվարաթղթե սալերից, մետաղական հիմնակմախքով 9.5մմ հաստ.	մ²	33.0	3.1	102.3
11	E15-665	Առաստաղի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ²	33.0	1.6244	53.6052
12	P5-119	Նախահատակ նրբատախտակով, δ=9մմ	մ²	33.0	4.0424	133.3992
13	E11-191 կիր.	Լամինատե հատակի պատրաստում 12մմ /արտերկրյա կամ համարժեք, ներառյալ սպունգը եւ շրիշակները/	մ²	33.0	9.92	327.36
14	E18-111	Ջեռուցման թուջե մարտկոցների վերատեղադրում	հատ	10	0.62	6.2
15	E15-614	Ջեռուցման թուջե մարտկոցների ներկում 2 շերտ	մ²	1.2	1.736	2.0832
16	8-603-1	Լուսատու առաստաղային 30վտ LED, 1250x250	հատ	6	6.2	37.2
17	E46-57	Ակոսների փորում պատերում	գմ	20.0	0.124	2.48
18	շուկա	Տուփեր ճյուղավորման	հատ	2	0.868	1.736
19	շուկա	Տուփեր վարդակների և անջատիչների տեղադրման համար	հատ	5	0.062	0.31
20	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՈՊՎ 3x2.5մմ2	գմ	30.0	0.3472	10.416
21	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՈՊՎ 3x1.5մմ2	գմ	30.0	0.248	7.44
22	8-591-7	Երկբևեռ հողանցիչով վարդակի տեղադրում	հատ	4	2.232	8.928
23	8-591-10	Երկստեղնավոր անջատիչի տեղադրում	հատ	1	1.984	1.984
		303 յարանի շինարարական աշխատանքներ				7.359%

		Քանդման աշխատանքներ				
1	E46-122	Փայտե պատուհանների ապամոնտաժում, պատուհանագոգերի հետ միասին	մ²	12.0	3.72	44.64
2	P11-80	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ²	99.2	0.124	12.3008
3	E46-121	Լինոլեումից հատակի քանդում	մ²	50.7	0.248	12.5736
4	8-603-1 K=0.4	Լուսատուների ապամոնտաժում	հատ	2	0.124	0.248
5	P17-140	Թուջե մարտկոցների ապամոնտաժում	հատ	21	0.4464	9.3744
6	C310-15 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 15կմ	տ	6.8	1.612	10.9616
						0.536%
		Կառուցողական աշխատանքներ				
1	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով կամ համարժեք, 60մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, բացվող	մ²	2.7	27.776	74.9952
2	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով կամ համարժեք, 60մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, չբացվող	մ²	9.3	16.616	154.5288
3	շուկա	Բարդ փական	հատ	1	8.68	8.68
4	E10-103	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 55սմ լայնությամբ	մ²	3.1	0.62	1.922
5	շուկա	Պլաստմասե պատուհանագոգի արժեքը,b=55սմ	գմ	5.6	5.1212	28.67872
6	P14-380	Պատերի քսահարթում գիպսոնիտով	մ²	19.9	0.4216	8.38984
7	E15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ²	99.2	1.6244	161.14048
8	E34-389 K=0.5	Կախովի առաստաղի պատրաստում գիպսաստվարաթղթե սալերից, մետաղական հիմնակմախքով 9.5մմ հաստ.	մ²	50.7	3.1	157.17
9	E15-665	Առաստաղի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ²	50.7	1.6244	82.35708
10	P5-119	Նախահատակ նրբատախտակով, δ=9մմ	մ²	50.7	4.0424	204.94968
11	E11-191 կիր.	Լամինատե հատակի պատրաստում 12մմ /արտերկրյա կամ համարժեք, ներառյալ սպունգը եւ շրիշակները/	մ²	50.7	9.92	502.944
12	E18-111	Ջեռուցման թուջե մարտկոցների վերատեղադրում	հատ	21	0.62	13.02
13	E15-614	Ջեռուցման թուջե մարտկոցների ներկում 2 շերտ	մ²	2.6	1.736	4.5136
14	8-603-1	Լուսատու առաստաղային 30վտ LED, 1250x250	հատ	6	6.2	37.2
15	E46-57	Ակոսների փորում պատերում	գմ	20.0	0.124	2.48
16	շուկա	Տուփեր ճյուղավորման	հատ	2	0.868	1.736
17	շուկա	Տուփեր վարդակների և անջատիչների տեղադրման համար	հատ	6	0.062	0.372
18	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՈՊՎ 3x2.5մմ2	գմ	40.0	0.3472	13.888
19	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՈՊՎ 3x1.5մմ2	գմ	30.0	0.248	7.44
20	8-591-7	Երկբևեռ հողանցիչով վարդակի տեղադրում	հատ	5	2.232	11.16
21	8-591-10	Երկստեղնավոր անջատիչի տեղադրում	հատ	1	1.984	1.984
						8.810%
		305 լսարանի շինարարական աշխատանքներ				
		Քանդման աշխատանքներ				
1	P11-80	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ²	93.8	0.124	11.6312
2	E46-94	Կախովի առաստաղի քանդում	մ²	49.0	0.9052	44.3548
3	E46-121	Լինոլեումից հատակի քանդում	մ²	49.0	0.248	12.152
4	8-603-1 K=0.4	Լուսատուների ապամոնտաժում	հատ	4	0.124	0.496
5	P17-140	Թուջե մարտկոցների ապամոնտաժում	հատ	20	0.4464	8.928
6	C310-15 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 15կմ	տ	7.5	1.612	12.09

						0.534%
		Կառուցողական աշխատանքներ				
1	Р14-380	Պատերի քսահարթում գիպսոնիտով	մ²	18.8	0.4216	7.92608
2	Е15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ²	93.8	1.6244	152.36872
3	Е34-389 К=0.5	Կախովի առաստաղի պատրաստում գիպսաստվարաթղթե սալերից, մետաղական հիմնակմախքով 9.5մմ հաստ.	մ²	49.0	3.1	151.9
4	Е15-665	Առաստաղի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ²	49.0	1.6244	79.5956
5	Р5-119	Նախահատակ նրբատախտակով, δ=9մմ	մ²	49.0	4.0424	198.0776
6	Е11-191 կիր.	Լամինատե հատակի պատրաստում 12մմ /արտերկրյա կամ համարժեք, ներառյալ սպունգը եւ շրիշակները/	մ²	49.0	9.92	486.08
7	Е18-111	Ջեռուցման թուջե մարտկոցների վերատեղադրում	հատ	20	0.62	12.4
8	Е15-614	Ջեռուցման թուջե մարտկոցների ներկում 2 շերտ	մ²	2.4	1.736	4.1664
9	8-603-1	Լուսատու առաստաղային 30վտ LED, 1250x250	հատ	6	6.2	37.2
10	Е46-57	Ակոսների փորում պատերում	գմ	20.0	0.124	2.48
11	շուկա	Տուփեր ճյուղավորման	հատ	2	0.868	1.736
12	շուկա	Տուփեր վարդակների և անջատիչների տեղադրման համար	հատ	6	0.062	0.372
13	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՊՈՒ 3x2.5մմ2	գմ	40.0	0.3472	13.888
14	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՊՈՒ 3x1.5մմ2	գմ	30.0	0.248	7.44
15	8-591-7	Երկբևեռ հողանցիչով վարդակի տեղադրում	հատ	5	2.232	11.16
16	8-591-10	Երկստեղնավոր անջատիչի տեղադրում	հատ	1	1.984	1.984
						6.959%
		Առաջին հարկի միջանցքի շինարարական աշխատանքներ				
		Քանդման աշխատանքներ				
1	Е46-124	Փայտե դռների ապամոնտաժում	մ²	31.6	2.48	78.368
2	Е46-122	Փայտե պատուհանների ապամոնտաժում, պատուհանագոգերի հետ միասին	մ²	6.3	3.72	23.436
3	Р11-80	Յուղաներկի մաքրում պատերից	մ²	304.1	0.1364	41.47924
4	Е46-121	Լինոլեումից հատակի քանդում	մ²	115.5	0.248	28.644
5	8-603-1 К=0.4	Լուսատուների ապամոնտաժում	հատ	7	0.124	0.868
6	Р17-140	Թուջե մարտկոցների ապամոնտաժում	հատ	10	0.4464	4.464
7	С310-15 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 15կմ	տ	14.3	1.612	23.0516
						1.193%
		Կառուցողական աշխատանքներ				
1	շուկա	Մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/, պրոֆիլ արտերկիր կամ համարժեք	մ²	27.3	30.256	825.9888
2	շուկա	Էլեկտրական արկղի մետաղապլաստե դռնակի տեղադրում	մ²	0.5	30.256	15.128
3	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով կամ համարժեք, 60մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, բացվող	մ²	0.9	27.776	24.9984
4	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով կամ համարժեք, 60մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, չբացվող	մ²	5.4	16.616	89.7264
5	Е10-103	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 40սմ լայնությամբ	մ²	0.8	0.62	0.496
6	շուկա	Պլաստմասե պատուհանագոգի արժեքը,b=40սմ	գմ	2.0	5.1212	10.2424
7	Е10-298 К=0.5	Պատերի երեսպատում գիպսաստվարաթղթե սալերով 12.5մմ հաստ. մետաղական հիմնակմախքով	մ2	7.4	3.5092	25.96808
8	շուկա	Պատերի հարդարման աշխատանքներում օգտագործվող մետաղական անկյունակների տեղադրում	գմ	140.0	0.248	34.72
9	Р14-380	Պատերի քսահարթում գիպսոնիտով	մ²	60.9	0.4216	25.67544
10	Е15-	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝	մ²	304.1	1.6244	493.98004

	664	ծեփամածիկմամբ				
11	E34-389 K=0.5	Կախովի առաստաղի պատրաստում 'Արմստրոնգ' տիպի, մետաղական հիմնակմախքով	մ²	114.6	3.596	412.1016
12	E11-135	Պրեսգրանիտե 60x60 սալերով հատակների իրականացում	մ²	3.5	7.998	27.993
13	E11-252	Պրեսգրանիտե շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	գմ	7.0	0.7998	5.5986
14	P5-119	Նախահատակ նրբատախտակով, δ=9մմ	մ²	115.9	4.0424	468.51416
15	E11-191 կիր.	Լամինատե հատակի պատրաստում 12մմ /արտերկրյա կամ համարժեք, ներառյալ սպունգը եւ շրիշակները/	մ²	115.9	9.92	1149.728
16	E18-111	Ջեռուցման թուջե մարտկոցների վերատեղադրում	հատ	10	0.62	6.2
17	E15-614	Ջեռուցման թուջե մարտկոցների ներկում 2 շերտ	մ²	1.2	1.736	2.0832
18	8-573-7	Հակահիդեհային մետաղական պահարանի տեղադրում 600x800x250	հատ	1	31	31
19	8-603-1	Լուսատու առաստաղային LED, 600x600	հատ	19	10.54	200.26
20	E46-57	Ակոսների փորում պատերում	գմ	40.0	0.124	4.96
21	շուկա	Տուփեր ճյուղավորման	հատ	5	0.868	4.34
22	շուկա	Տուփեր վարդակների և անջատիչների տեղադրման համար	հատ	14	0.062	0.868
23	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՊՊՎ 3x2.5մմ2	գմ	80.0	0.3472	27.776
24	8-402-2	Պղնձե հաղորդալարի մոնտաժում, ՊՊՎ 3x1.5մմ2	գմ	65.0	0.248	16.12
25	8-591-7	Երկբևեռ հողանցիչով վարդակի տեղադրում	հատ	10	2.232	22.32
26	8-591-10	Երկստեղնավոր անջատիչի տեղադրում	հատ	4	1.984	7.936
		Ընդամենը				23.429%
		Շահույթ, 11%				**12,421.828**
		Ընդամենը				1,366.401
		Չնախատեսված ծախսեր 1.5%				**13,788.229**
		Ընդամենը				206.823
		ԱԱՀ, 20%				**13,995.052**
		Ընդամենը				2,799.010,44
						16,794.063
						100%

*Հավելված 1.1 –ում ներկայացված է պահանջվող աշխատանքների իրականացման համար օգտագործվող ապրանքների տեխնիկական բնութագրերը

** Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան Տերյան 105 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտորի պ/կ, պրոռեկտոր
---------- Ռ.Աղգաշյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Գավառ, Ազատության 49/27
Բանկը՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660000529190100
ՀՎՀՀ 08416387

Տնօրեն ---------- Գ.Գոքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1.1
« 24 » սեպտեմբեր 2020թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագրեր

NN	**Տեխնիկական բնութագրեր**
	Կառուցողական աշխատանքներ
	/Առաջին հարկի միջանցք և լսարաններ՝ 102, 201, 201/1, 202,
1	Մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/, պրոֆիլը որակյալ Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստությամբ պրոֆիլներից խուլ դռներ, միջնամասը՝ լամինատ կամ ՄԴՖ, /պրոֆիլ՝ որակյալ, բազմախոռոչ / բռնակը, սարքերը, կողպեքները որակյալ
2	/Լսարան՝ 102/, Լամինատե հատակի պատրաստում, հաստությունը՝ 12մմ /ներառյալ սպունգը եւ շրիշակները/ 12մմ, Խոնավադիմացկուն և ջրակայուն 33 կարգի,/գույնը և տեսքը համաձայնացնել պատվիրատուի հետ
3	/Լսարան՝ 201/, Լամինատե հատակի պատրաստում, հաստությունը՝ 12մմ /ներառյալ սպունգը եւ շրիշակները/ 12մմ, Խոնավադիմացկուն և ջրակայուն 33 կարգի,/գույնը և տեսքը համաձայնացնել պատվիրատուի հետ
4	/Լսարան՝ 201/1, Լամինատե հատակի պատրաստում, հաստությունը՝ 12մմ /ներառյալ սպունգը եւ շրիշակները/ 12մմ, Խոնավադիմացկուն և ջրակայուն 33 կարգի,/գույնը և տեսքը համաձայնացնել պատվիրատուի հետ
5	/Լսարան՝ 202/, Լամինատե հատակի պատրաստում, հաստությունը՝ 12մմ /ներառյալ սպունգը եւ շրիշակները/ 12մմ, Խոնավադիմացկուն և ջրակայուն 33 կարգի,/գույնը և տեսքը համաձայնացնել պատվիրատուի հետ
6	/Լսարան՝ 303/, Լամինատե հատակի պատրաստում, հաստությունը՝ 12մմ /ներառյալ սպունգը եւ շրիշակները/ 12մմ, Խոնավադիմացկուն և ջրակայուն 33 կարգի,/գույնը և տեսքը համաձայնացնել պատվիրատուի հետ
7	/Լսարան՝ 305/, Լամինատե հատակի պատրաստում, հաստությունը՝ 12մմ /ներառյալ սպունգը եւ շրիշակները/ 12մմ, Խոնավադիմացկուն և ջրակայուն 33 կարգի,/գույնը և տեսքը համաձայնացնել պատվիրատուի հետ
8	/Առաջին հարկի միջանցք/ Պրեսգրանիտե 60x60 սալերով հատակների իրականացում Որակյալ, չսահող, եվրոպական արտադրության կամ համարժեք, գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ
9	Լամինատե հատակի պատրաստում, հաստությունը՝ 12մմ /ներառյալ սպունգը եւ շրիշակները/ 12մմ, Խոնավադիմացկուն և ջրակայուն 33 կարգի,/գույնը և տեսքը համաձայնացնել պատվիրատուի հետ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտորի պ/կ, պրոռեկտոր

---------- Ռ.Աղգաշյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Գավառ, Ազատության 49/27
Բանկը՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660000529190100
ՀՎՀՀ 08416387

Տնօրեն ---------- Գ.Գոքոյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«24» սեպտեմբեր 2020թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Թիվ 7 մասնաշենքի առաջին հարկի միջանցքի և 102, 201, 201/1, 202, 303, 305 լսարանների վերանորոգման աշխատանքների

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Շին.մոնտաժային աշխատանքների նախապատրաստման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	5 օրացույցային օրվա ընթացքում
2	Քանդման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	8 օրացույցային օրվա ընթացքում
3	Կառուցման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	70 օրացույցային օրվա ընթացքում
4	Հայտնաբերված թերությունների վերացման, տարածքի մաքրման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	80 օրացույցային օրվա ընթացքում
5	Անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում, շահագործման հանձնում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	90 օրացույցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	90 օրացույցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտորի պ/կ, պրոռեկտոր

---------- Ռ.Աղգաշյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Գավառ, Ազատության 49/27
Բանկը՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660000529190100
ՀՎՀՀ 08416387

Տնօրեն ---------- Գ.Գոքոյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2.1
« 24 » սեպտեմբեր 2020թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

Թիվ 7 մասնաշենքի առաջին հարկի միջանցքի և 102, 201, 201/1, 202, 303, 305 լսարանների վերանորոգման աշխատանքների

Չ/Բ համարը	Նյութերի տեսակները	Երաշխիքային նվազագույն ժամկետը (տարի)
Չափաբաժին 1 Թիվ 7 մասնաշենքի առաջին հարկի միջանցքի և 102, 201, 201/1, 202, 303, 305 լսարանների վերանորոգման աշխատանքներ	Ապակի	5
	Մետաղապլաստ	10
	Հատակներ և դրանց առանձին նյութեր և շինվածքներ	10
	Գաջ	20
	Ցեմենտ	20
	Ավազ	20
	Երեսապատման սալեր	10
	Մալուխ	25

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտորի պ/կ, պրոռեկտոր

---------- Ռ.Աղգաշյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Գավառ, Ազատության 49/27
Բանկը՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660000529190100
ՀՎՀՀ 08416387

Տնօրեն ---------- Գ.Գոքոյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N
« 24 » սեպտեմբեր 2020թ. կնքվա
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/3 ծածկագրով պայմանագր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրա

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100	Թիվ 7 մասնաշենքի առաջին հարկի միջանցքի և 102, 201, 201/1, 202, 303, 305լսարանների վերանորոգման աշխատանքներ	-	-	6,717.625	13,435.250	16,794.063	16,794.063

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտորի պ/կ, պրոռեկտոր

---------- Ռ.Վոլգաչյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Գավառ, Ազատության 49/27
Բանկը՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660000529190100
ՀՎՀՀ 08416387

Տնօրեն ---------- Գ.Գոքոյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 24 » սեպտեմբեր 2020թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«24» 09 2020թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն